ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հունիսի 2023 թվականի N 213 -Ա

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ԵՎ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածով և համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի նոյեմբերի 30-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2023 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» N3245-Ա հրամանի, որոշում եմ.

1. Հաստատել 2023 թվականին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև և Սիսիան համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողություն կատարող աշխատանքային խմբի (այսուհետ՝ Աշխատանքային խումբ) անհատական կազմը՝ համաձայն հավելվածի.
2. Ընդունել ի գիտություն, որ անհրաժեշտության դեպքում, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի գրության համաձայն, Աշխատանքային խմբի կազմում կարող են ընդգրկվել նաև Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացուցիչները.
3. Աշխատանքային խմբի անդամների մեջ ուսումնասիրվող բնագավառների բաշխումը տեղում կատարում է Աշխատանքային խմբի ղեկավարը՝ համաձայն Սյունիքի մարզպետի աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման գործառույթների:
4. Աշխատանքային խմբին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրավական ու մասնագիտական հսկողության 2023 թվականի աշխատանքային ծրագրի կատարումը և անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

09.06.2023

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2023թ. հունիսի 9
ք. Կապան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի
2023 թվականի հունիսի 9-ի N 213-Ա

ԿԱԶՄ

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ԵՎ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Հ/Հ	Անուն, ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը
1	Սեյրան Ավետիսյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ, աշխատանքային խմբի ղեկավար
2	Թամար Ստեփանյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
3	Մարինե Աբգարյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ
4	Նարինե Աթայան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության գլխավոր մասնագետ
5	Արմեն Մարտիրոսյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ
6	Արթուր Արզումանյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ
7	Թամարա Կարապետյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ
8	Մուշեղ Կոստանդյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ
9	Նելլի Կարապետյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի ավագ մասնագետ
10	Հայկ Կարախանյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ
11	Մարիաննա Ստեփանյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի ավագ մասնագետ

12	Մարատ Պողոսյան	ԱԻՆ Փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության ավագ հրահանգիչ
13	Նելլի Մովսիսյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի գլխավոր մասնագետ
14	Սարիկ Աղաբեկյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ
15	Աննա Ոսկանյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ
16	Վահրամ Արզումանյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի առաջատար մասնագետ

Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝ **Է.Մարտիրոսյան**